

ԵՊՂ հայագիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող Երջանիկ Փետրոսյանը հրատարակության է պատրաստել հայոց շարժումային լեզվի բառարան, որ նորություն է հայագիտության մեջ: Տպագրելով բառարանի առաջաբանը և մի քանի բառահոլոված՝ հույս ունենք, որ ընթերցողը որոշ պատկերացում կկազմի ներկայացվող աշխատանքի մասին: Թեև մասնագետներ ունենան ինչ-ինչ նկատառումներ ու դիտողություններ, արոնք կօգնեն հեղինակին հետագա աշխատանքներում: Ցանկայի է նաև, որ նորուակ այս բառարանը արժանանա հրատարակիչների ուշադրությանը:

ԽՄԲ.

ՀԱՄԱՌՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- | | |
|--|--|
| <p>ԱՍԵ— Անահիտ Անկոյան:
 ԱՍտ— Անժելա Ստեփանյան:
 ԱՔ— Արտաշես Քալանթարյան:
 ԲԱՅ.— Բայական բառային միավորներ:
 ԲՀ— Բաղիշ Հովսեփյան:
 ԳԱր— Գևորգ Արշակյան:
 ԳԲ— Գարեգին Բես:
 ԳԼ— Գարեգին Լևոնյան:
 Գոյ.— Գոչական բառային միավորներ:
 ԳՍու— Գարրիել Սունդուկյան:
 ԴՂ— Դոնարա Ղարազյոզյան:
 ԵՕ— Երվանդ Օռոյան:
 ԶԻն.— Զինվորական գործ:
 ԹԺՀ— Թումանյանը ժամանակակիցների հուշերում:
 ԺՀ— Ժորա Հարությունյան:
 ԼԾ— Լևոն Ծանթ:
 ԽԳ— Խաժակ Գրյունազարյան:
 Ծած.— Ծածկաբանական:
 Կեց.— Կեցվածք:
 ԿԶ— Կոտտան Զարյան:
 Հ— Համաստեղ:
 ՀՀ— Հրաչյա Հովհաննիսյան:
 ՀՂա— Հովհաննես Ղանայանյան:
 ՀՄ— Հրանտ Մաթևոսյան
 ՀՍ— Հմայակ Սիրաս:</p> | <p>ՀՔ— Հրաչյա Քոչար:
 ՂԱ— Ղազարոս Աղայան:
 Մ— Մուրացան:
 ՄԱ— Մկրտիչ Արմեն:
 ՄՄ— Մանուկ Մնացականյան:
 ՄՍ— Մկրտիչ Սարգսյան:
 ՄՍպ— Մարիա Սպենդիարյան:
 Ն— Նար-դոս:
 Ծ— Ծիրվանգաղե:
 Ծ.— Ծարժույթ:
 Ծարժ.— Ծարժանք:
 ԾԹ.— Ծախեն Թաթևիկյան:
 ՊՊ— Պերճ Պողոսյան:
 ՌԶ.— Ռուբեն Զարյան:
 ՌՀ— Ռոբեն Հովսեփյան:
 ՍԱ— Սոբեն Այվազյան:
 ՍԶ— Ստեփան Զորյան:
 ՍԽ— Սերո Խանգաղյան:
 ՍԿ— Ստեփան Կուրտիկյան:
 ԱՀա— Սաղաթել Հարությունյան:
 ՍՍա— Սերգեյ Սարիճյան:
 ՎՊ— Վարդես Պետրոսյան:
 ՎՓ— Վրթանես Փափազյան:
 ՏԿ— Տիգրան Կամսարական:
 Քայլ.— Քայլվածք:
 ՔԹ— Քրիստափոր Թափալցյան:
 ՖՎ— Ֆրանց Վերֆել:</p> |
|--|--|

ՍՏԵՂԵՄԱՆ ԾԱՌԺԱՌԻԹՆԵՐԸ

Քսաներորդ դարի քսանական-երեսնական թվականներին ձևավորվեց մի նոր գիտություն, որը հայերենում մենք կարող ենք կոչել շարժությաբանություն¹: Այլևայլ լեզուներում այն հայտնի է «կինեմաթիկա» անվանումով: Ծարժությաբանությունն ուսումնասիրում է սովյալ ժողովրդի շարժությունները (կինեմա)՝ որևէ հանրության մեջ տարածում ըստացած և գիտակցության մեջ տարրորջված շարժումները, որոնք ծառայում են որպես փոխհաղորդակցման միջոց՝ արտահայտելով հասկացություն, գաղափար (հատկապես, թիվ, գործողություն և այլն), հույզ, զգացումներ: Ծարժությունը կատարվում են շարժումային լեզվի դրսևորման հիմն եղանակով՝ շարժանք (ժեստ—եզոպլոթ)² սկադ. է. Աղայանի), մարմնաշարժանք², դիմախաղ, կեցվածք:

Ծարժանքը կատարվում է մարմնի մեկ կամ մի քանի՝ ոչ-դիմաչին մասով՝ «մատով կանչել», «ուտերը թոթվել» (տարակո սել, զարմանալ), «ձեռքը ծնկանը խփել» (վըշտանալ), մարմնաշարժանք՝ ամբողջ կամ գրեթե ամբողջ մարմնով՝ «տեղից վեր ցատկել» (զայրանալ), մերթ մեկ, մերթ մյուս ոտքի վրա հենվել» (անհարմար վիճակում լինել, ճնշվել), «մեկին ձեռքերի վրա վերվեր նետել» (արտակարգ սիրո և գովեստի արժանացնել), դիմախաղը՝ լրիվ դիմքով կամ նրա մեկ (մի քանի) մասով՝ «ծպտալ» (քարեկամակամ, սիրափր վերաբերմունք արտահայտել), «չքով անել» (ծածկ իմաց տալ), «դեմքը կնճոտել» (անսխործություն զգալ): Կեցվածքները ամբողջ մարմնի կամ նրա մի մասի և կամ մի քանի մասի դիրքերն են հաղորդակցման ընթացքում՝ «ձեռքը նակտիմ» (մտախոհ), «գլուխը կախ» (տխուր). «ծնկաչոք» (աղոթքի կեցվածք): Քայլվածքի հաղորդակցական եղանակներից են՝ «բարկացած քայլել», «տարերի մատների վրա քայլել» (զգույշ, անձայն քայլել), հետ-հետ գնալով քայլել» 1. Խիստ զար-

մանալ: 2. Հարգանքով ու երկյուղածությամբ վերաբերվել դեպի սրբությունը:

Նշված հինգ տխի շարժություններն էլ, մեծավ մասամբ, (հասկացություն, գաղափար արտահայտողները՝ թորորը) կրկնօրինակում են բառերը, արտացոլելով այն, ինչ նախապես տեղ է գտել հնչյունական լեզվում, և իրենց ամբողջության մեջ կազմում են շարժումային լեզու, որով էլ շարժությաբանությունը դառնում է լեզվաբանության մի գիտակարգը: Ծարժումային լեզուն ոչ-քանավոր հաղորդակցման ամենակարևոր և ամենօրյա գործածություն ունեցող միջոցն է: Եվ ընդհանրապես, որպես հաղորդակցման, գիտելիքների ամրապնդման ու սերունդներին փոխանցելու միջոց, այն հնչյունական լեզվից հետո երկրորդն է:

Գնալով ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն է նկատվում շարժումային լեզվի նկատմամբ. ստեղծվել ու ստեղծվում են միջազգային կամ տեղական գործածության արհեստական շարժալեզուներ, գրվում տեսական ու համեմատական ուսումնասիրություններ տարբեր ժողովուրդների շարժասության (ժեստիկուլյացիա) վերաբերյալ, կազմվում են ոլորտային (առանձին բնագավառներում գործածվող) կամ ազգային շարժությունների նորանոր թառարաններ, որպիսիք արդեն ունեն, օրինակ, իտալացիները, լատինամերիկյան ժողովուրդները, հնդկացիները, հնդիկները, չիճացիները, ռուսները և այլն: Նման հետաքրքրությունը, նշված հաղորդակցական դերից բացի, պայմանավորվում է նաև նրանով, որ շարժումային լեզուն լայնորեն առնչվում է մի շարք հասարակական գիտությունների, բնախոսության, սպորտի, գրականության, թատրոնի, ինչպես նաև արվեստի արտալեզվական դրսևորման այնպիսի ձևերի հետ, որպիսիք են երաժշտությունը, պարը, քանդակագործությունը, նկարչությունը: Օտար լեզուների դասավանդման գործում մանկավարժները հատուկ տեղ են առանձնացնում սովյալ լեզուն կրող ժողովրդի շարժասությանը, որովհետև առանց վերջինիս գիտության, միայն հնչյունական լեզվի իմացությամբ, հնարավոր չէ լրիվ սոցիալականացումը՝ որևէ մշակութայնապատմական հանրության անդամ դառնալը, անարգել հաղորդակցումը: Այս պատճառով ուսումնական ձեռնարկներում ներկայացվում են ավելի ու ավելի մեծ թվով ազգային շարժումներ՝ գեթ նվազագույնը: Լեզվերկրագիտության պահանջներից էլնելով որպես դասավանդողի, նախապատվությունը տրվում է օտար լեզուն կրող ժողովրդի ներկայացուցչին:

¹ Ա. Կադ. Գ. Զամոկյանն իր «Ժամանակակից հնագիտական տեսության հիմունքները» (1974, էջ 118), զրքում առաջարկել է «շարժաբանություն» եզրույթը, որը շփոթվում է շատ ավելի վաղ գործածության մեջ մտած մեթոմաթիկայի նույնանուն եզրույթի հետ:

² Տողերիս հեղինակը «Ծարժումների լեզուն (շարժաբանության ներածություն)» զրքում գործածում է «մարմնաշարժում» եզրույթը (Երևան, 1988, էջ 16), որը նշանակում է ընդհանրապես մարմնով կատարվող ամեն տխի ոչ-հաղորդակցական շարժում (հմմտ. ռուս. телодвижение) և շփոթության տեղիք է տալիս:

Յուրաքանչյուր ժողովրդի շարժասությունն ձևը է բերվում ողջ պատմության ընթացքում և դառնում մշակույթի անբաժանելի և առանձնահատուկ մասը: Ծարժույթների քննությունը պայմանավորվում է տվյալ երկրի աշխարհագրական դիրքով, կլիմայով, ազգային ավանդույթներով, հավատալիքներով, հարևան ժողովուրդների ազդեցությամբ: Հայ ժողովուրդն աչքերով Եվրոպայի ու Ասիայի սահմանագծի մոտ, հիմնականում քարեխտան կլիմայի գոտում, քրիստոնյա և մահմեդական աշխարհների միջև, մշտապես իր շարժասության վրա կրել է Արևելյան Եվրոպայի և Միջին ու Մերձավոր արևելքի ազդեցությունը: Ազգային՝ սեփականի կողքին, յուրացրել է միջազգային շարժույթներ՝ տարածված երկրագնդի չորս ծագերում:

Վաղուց ժամանակն էր ունենալու հայոց շարժումային լեզվի բառարան: «Բառարան» բառն այստեղ մենք գործածեցինք ավանդաբար, ավելի ստույգ կլինի ասել «շարժութարան», քանի որ դրանում հավաքվում, պատկերվում ու քացատրվում են շարժույթներ: Որպես առաջին փորձ, հայ լեզվաբանության խնդիրն էր հավաքել մեր ժողովրդի մեջ համընդհանուր գործածություն կամ ճանաչում ունեցող շարժույթները, որոնց թիվը հազարից ավելի է: Այդ գործին մենք ձեռնամուխ եղանք 1970-ական թվականների վերջից, և սույն շարժութարանում հարմար գտանք ներկայացնել 645 շարժույթ:

Հայ լեզվաբանության երկրորդ խնդիրը կլինի, թերևս, մեր ողջ շարժասական (ժեստիկուլացիոն) պաշարը հավաքելն ու հրապարակելը՝ ընդգրկելով նաև առանձին ուղղություններին, տարբեր խավերի մարդկանց հատուկ շարժույթները, որոնք իրենց գործառությանը ու ինստուային առումով հիշեցնում են եզրույթները, ժարգոնային, քարբառային քառերը: Այդ կարգի շարժույթների թիվը մեզանում մոտավորապես հասնում է տասը հազարի: Երեք հազարից ավելի են միայն խուլուհամբերի լեզվի, հազարի չափ՝ մարզական շարժույթները: Բազմաթիվ են փոխադրական գործի և ճանապարհային, ապա նաև շինարարական, կրոնական, դիրիժորական, ջրասուզակների, ծխողների, արտադրական, պարագրական գաղտնի կազմակերպությունների և այլն, և այլն շարժույթները: Այս ամենի հավաքումն ու հրապարակումը տասնամյակների ու տարբեր մասնագիտությունների մարդկանց գործ է:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ
ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.— Սույն շարժութարանի համար հիմք են ծառայել առօրյա կյանքում մարդկանց կենդանի կատարումներից, կինոկարճերից ու ներկայացումներից, կիրառական արվեստի ու կերպարվեստի ստեղծագործություններից, քաջ հատկապես հայ գրականությունից քաղած նյութերը: Առաջին

երեք աղբյուրներից վերցրել ենք այն շարժույթները, որոնք հաստատվել են երեք՝ միմյանց անձանոթ մարդկանց կողմից և մեկով ու իմաստով համընկել: Նկարչության, քանդակագործության և արվեստի այլ տեսակների դեպքում նշուման գործն ավելի հեշտ է, քանի որ նյութն արձանագրված է, վավերացված: Հարկ է եղել կարողալու աշխարհաբար գրականության մեծագույն մասը՝ Խ. Աբովյանից մինչև մեր օրերի նորեկ գրողներ՝ Ավետիք Այվազյան, Սատուկ Վարդանյան և ուրիշներ: Գրողների երկերում շարժույթները ոչ միայն վկայվում են, այլև, շատ հաճախ, մանրամասն նկարագրվում: Գրականությունից, որպես կանոն, վերցրել ենք այն շարժույթները, որոնք հանդիպում են առընթաց երկու հեղինակի մոտ:

Անգնահատելի է գիտական գրականության դերը: Այստեղ շարժույթն արդեն զրուցված է, ուսումնասիրված: Նյութը մատուցվում է պատրաստի: Այս կերպ երեք տասնյակից ավելի շարժույթ է ընդգրկված միայն Մ. Գաբրիելյանի, Ռ. Թոխմախյանի, Ա. Խաչատրյանի աշխատություններից: Ծատ են գանազան բառարաններից վերցրածները, նշարածները:

Ուսումնասիրման մեթոդաբանական հիմք է հանդիսացել այն դրույթը, ըստ որի լեզուն գիտակցության ձև է ու, որպես այդպիսին, խորհրդանշանների միջոցով արտացոլում է նյութական աշխարհը, կեցությունը: Եվ եթե այս երևույթը հնչյունական լեզվում իրականացվում է հնչանշանների միջոցով, ապա շարժումային լեզվում նույնը կատարվում է շարժանշանների միջոցով: Բանի որ վերջինները մեծ մասամբ կրկնօրինակում են առաջինները, ուստի կանմատակասն զուգահեռ կարելի է անցկացնել հնչյունական լեզվի ու շարժումային լեզվի, շարժասության ու քառապաշարի, քառերի ու շարժույթների միջև: Ըստ որում, շարժույթները ևս ունեն քառերի նշանային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ մեմիմաստությունը, բազմիմաստությունը, հոմանիշությունը, հականիշությունը, կարող են դառնալ հնաբանություններ, դուրս գալ գործածությունից, փոխառվել, կազմությանը լինել պարզ կամ բարդ, ունենալ ոճական յուրահատկություններ և այլն: Ծարժութարանն ինքնին գալիս է ի ցույց դնելու նշված հանգամանքները:

ԾԱՐԺՈՒԹԱՐԱՆԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔԸ.— Ծարժութարանը կազմելիս ձգտել ենք հնարավորին չափ պարզ և օգտվելու համար հարմար կառուցվածքի: Յուրաքանչյուր շարժույթ համարակալված է, գրված բառահողվածի սկզբում: Սա օգնում է գանազան արդյունքներով կատարվող հղումների դեպքում հեշտությամբ գտնելու անհրաժեշտ շարժույթը: ինչպես՝ 2. 1, 2. 2, ...2. 10, 2. 20,2. 100, 2. 200 և այսպես մինչև՝ 2. 645:

Հենց սկզբում նշվում է շարժույթի՝ շարժու-
մային լեզվի դրսևորման ո՛ր միջոցին պատ-
կանելը:

Անունետև տրվում է շարժույթի պատկե-
րը՝ տեսողությամբ ևս այն ընկալելու համար:
Ծարժանքները, մարմնաշարժանքները,
կեցվածքները, դիմախաղերը, քայլվածքի ե-
ղանակները իրենց բառային արտացոլումն
են ունենում հնչյունական լեզվում: Այլ կերպ
ասած, նկարագրվում են առանձին բառերի
կամ բառակապակցությունների միջոցով:
Պատկերից հետո տրվում են կենդանի խոս-
քից, բայց հատկապես հայ գրականությունից
կարելի է չափ հավաքած՝ շարժույթը լու-
սաբանող բառերն ու բառակապակցությու-
նները: Սա բառային տարբերակների ու հոմա-
նիշների միջոցով լեզվական արտացոլման
սպեկտր է: Բառային միավորները դասավոր-
ված են ըստ այբբենական կարգի և ըստ
խոսքիմասային պատկանելության: Բառակա-
պակցությունները կազմված են ըստ գեռա-
կա անդամների, որոնք մեծ մասամբ գոյա-
կաններ են, բայրական քաղաղիչները, այդ
պատճառով, գրեթե միշտ, դրվում են վեր-
ջում: Օրինակ. «ձեռքը սեղանին խփել», «ու-
սերը թոթվել», «տեղից վեր թռչել», «տաքը
ոտքի վրա գցել», «գլուխը բարձր պահել»:
Բառային միավորները հասնում են մի քանի
տասնյակի, որոշ դեպքերում անցնում հար-
յուրից: Բավանդատությունը բառահողմած-
ներում սովորական է, որը բացատրվում է
հայերենում եղած բառային տարբերակների
ու հոմանիշների առատությամբ, որոնք էլ
կազմում են ամենատարբեր ու բազմաթիվ
կայուն բառակապակցական գույզորոշումնե-
ր: Վերջենք «բաժակ-բաժակի տալ» (ոգե-
լից խմիչք խմելիս միմյանց բարենաղթել)
շարժույթը, որն արտահայտվում է մի քանի
տասնյակ բառով ու բառակապակցությամբ:
Այստեղ «բաժակի» փոխարեն, որպես գոյա-
կանային անդամ, կարող են հանդես գալ
«զավաք» կամ «բաս» բառերը՝ գավաքներն
իրար զարկել, թասը թասին խփել: Երբ շեշ-
տըվում է բաժակների միմյանց բախվելու
հանգամանքը, հանդես են գալիս զարկել,
զարնել, խժոել, թափվել, դիպել և այլ բայեր:
Բաժակների հանած աղմուկի դեպքում գոր-
ծածվում են քնանձայնական բառեր թրխկաց-
նել, չխկացնել, զնգալ, զրնգացնել և այլն:
Բաժակների պարզապես միմյանց գալու հա-
մար՝ մոտենալ, միանալ, քերվել բայերը:
«Գլխի դեպքում շարժվածք» (այդ) շար-
ժույթի դեպքում, որն արտահայտվում է ավե-
լի մեծ թվով բառային միավորներով, կարող
է շեշտվել իմաստային կողմը, և կունենանք
օգիտվ հաստատել, գլուխը դրակահորեն
շարժել, գլխով այդ ասել, գլխի շարժումով
համաձայնություն տալ և այլն: ցույց տրվել
գլխի շարժման ուղղությունը, գլուխն իջեց-
նել, գլուխը վար ու վեր լինել, գլուխը բար-

ձըր ու ցած անել, գլուխը վեր վար ծռել և
այլն, կամ պարզապես ակնարկել օգիտվ կա-
տարվող շարժումը. գլուխը շարժել, գլխով ա-
նել, գլուխը տմբացնել, գլուխը ցնցել և այլն:

Վերջապես, մի երրորդ՝ «համբույր» շար-
ժույթի արտացոլման ձևերում փոխարինա-
բար հանդես են գալիս նաև «պագ», «պաչ»,
«պոռչտի» գոյականային բառերը և դրանցով
համապատասխանաբար կազմված «համբու-
րել», «պագ(ն)ել», «պաչել» բայերն ու գա-
նազան հարադիրներ՝ համբույր դրոշմել,
համբույր քաղել, պաչ անել, պոռչտի անել:
ունենք բազմաթիվ հարազատական բառակա-
պակցություններ՝ կապված քեղերը դեմքի
հետ շփվելու, շրթունքների, շուրթերի (շրթնե-
րի) կատարած գործողությունների հետ. քե-
ղերը մեկի այտին քսել (խողտացնել), շուր-
թերը որևէ քանի սեղմել (հպել), շրթունքներն
իրար միանալ, շրթունքները մի քանի չըպ-
պացնել, համբույրն ակնարկող հարադիրներ՝
քերանին տանել, շուրթերին տանել, շրթունք-
ներից մոտեցնել: Եվ այսպես գրեթե յուրա-
քանչյուր շարժույթի դեպքում:

Նման և շատ ու շատ այլ պատճառներով
առաջացած ձևերի բազմազանությունը հնա-
րավորություն է ընձեռում խորապես ուսում-
նասիրելու հայոց շարժումային լեզվի արտա-
ցոլման երևույթը հայոց հնչյունական լեզվում:

Լեզվական արտացոլման պատկերից հա-
ջորդում է շարժույթի կատարման սեփական
բառահն նկարագրությունը, որով տեսողա-
կան ընկալման ու բառային արտահայտման
ձևերի հետ մեկտեղ ամբողջաճանում է շարժու-
յթի ընդհանուր բնութագիրը: Ինչպես ԱՋԱ-
ԿՆՔԵԼ (խաչակնքել)՝ աջ ձեռքի բթամատի,
ցուցամատի ու միջնամատի ծայրերը միաց-
նելով՝ դնել նախ ճակատին, ապա կրծքա-
վանդակի տակ՝ փոքին, կրծքի ձախ կողմին
և վերջում՝ աջ կողմին: ՄԱՍԸ ՔԱՓԱՀԱՐԵԼ
(մատով ապառնալ)՝ ցուցամատը մեկնել ա-
ռաջ, մյուս մատները բռունցք աճել. թևը ծալ-
վում է արմուկից, ձեռքի ափն ուղղվում է
դեպի մի կողմ՝ բթամատի կողմը՝ վեր. մատը
կշռոյթով թափահարվում է ձեռքի հետ վեր
ու վար կամ շեղակի դեպի կործքը և առաջ,
սաստկության դեպքում թափահարվում է
նաև թևը արմուկից: «Զգաստ կանգնել»-
կանգնել մարմինն ուղիղ, ձգված դիրքով,
ոտքերի կրունկներն իրար միացրած, գլուխը
բարձր, ձեռքերն ազդրերի երկարությամբ,
անդրավարտիքի կարերի ուղղությամբ, ձիզ
վայր թողած:

Այս ընդհանուր բնութագրումից հետո ըս-
կըսվում է բառահողմածի բացատրական մա-
սը: Տրվում են շարժույթի իմաստները՝ հա-
մարակալված արարական թվանշաններով:
Ծարժույթը կարող է լինել մեկիմաստ, ունե-
նալ մի քանի, տասը կամ տասից ավելի ի-
մաստներ: Յուրաքանչյուր իմաստի լուսա-
բանման համար, որպես կանոն, բերվում են

հեղինակային վկայություններ հայ գրականությունից՝ ամեն բարի կամ բառակապակցության համար, մեծ մասամբ, երկուական:

Բառահողվածները դասավորված են այբբենական կարգով, ըստ առաջին բառային միավորի, որին համապատասխան էլ կատարված է շարժույթի համարակալումը. այսինքն՝ որքան մոտ ենք այրութենի սկզբին, այնքան փոքր է համարակալող թիվը, որքան հեռանում ենք, այնքան մեծանում է այդ թիվը: Այսպես. առաջին շարժույթի բառահողվածը սկսվում է «ազուցած մատները՝ ճմլել» (տառապել), երկրորդինը՝ «ազդրերի ուղղությամբ ձեռքերը ձգել» (զգաստ կանգնել), երրորդինը՝ «ազդրը սեղմել» (ծածուկ մի բան հասկացնել), չորրորդինը՝ «ազդրին զարկել» (վշտանալ) բառակապակցություններով և այսպես շարունակ. 5. «ազնվական քայլվածք», 6. «աթոռից բարձրանալ», 7. «աթոռ ցույց տալ» և այլն:

Բառահողվածներում տրվում են նշումներ, որոնք բնորոշում են շարժույթները (հնացած, հազվադեպ, անխրախուսելի), կատարման սաստկությունը (թույլ, ուժգին), ցույց են տալիս կիրառության ոլորտը (կրոնական, զինվորական, մարզական), տարբերակները: Վերջիններս կարող են լինել երկուսից-չորսը. առանձնացվում են տառային նշումներով՝ ա, բ, գ, դ:

Շարժութարանում անհրաժեշտ շարժույթը կարելի է գտնել երկու եղանակով: Եթե հայտնի է այն արտացոլող բառը կամ բառակապակցությունը, դրանք փնտրվում ենք բառահողվածների շարքում, համաձայն այբբենական կարգի, և նայում դիմացը նշվող շարժույթի համարը: Օրինակ. եթե ունենք ԺՊՏԱԼ, հորոշ է կատարվում՝ 2. 17, ՄԱՏՆԵՐՈՎ ՄԱՂԱՇԱՐ ԾՈՒՅՑ ՏԱԼ (բանտ),՝ 2. 372, ՏԵՂԻՑ ՎԵՐ ԾԱՏԿԵԼ (անակնկալի գալ)՝ 2. 390 և այլն:

Սակայն կարող է հայտնի լինել ոչ թե բառային միավորը, այլ շարժույթի իմաստը: Վերջինիս միջոցով նույնպես կարելի է գտնել:

նել անհրաժեշտ շարժանքը, մարմնաշարժանքը, դիմախաղը, կեցվածքը, քայլվածքը, որովհետև շարժութարանի վերջում տրվում է բոլոր շարժույթների իմաստների ցանկը: Այսպես. «այդ» իմաստի համար նշվում են՝ 2. 60, 101, 199, 282, 283. «Ոչ» իմաստի համար՝ 2. 208, 515, 565, 633. «Ես» իմաստի համար՝ 2. 55, 93, 246, 379, 576: Ստացվում են հոմանիշային շարքեր: Իմաստների ցանկը օգտակար կարող է լինել նաև հայոց շարժասության մեջ հոմանիշության երևույթն ուսումնասիրողներին:

Սույն շարժութարանը հայոց շարժասական պաշարը հավաքելու և մատուցելու առաջին փորձն է և, անկասկած, գեթ չէ թերություններից, բացերից: Մասնավորապես, հնարավոր են աչքաթող արված ընդհանուր գործածություն կամ ճանաչում ունեցող շարժույթներ, իմաստներ, նկարագրությունների մանրամասներ: Այս կապակցությամբ ընթերցող հասարակության արած դիտողություններն ու լրացումները հեղինակը կընդունի հրատարակության դեպքում ընդգրկվելիք հրատարակության դեպքում ընդգրկվելիք, նյութն ավելի ամբողջական դարձնելու համար:

Շարժութարանը նախատեսվում է շարժութարանների, բանասերների, շարժումային լեզվի հետ առնչվող գիտությունների մասնագետների, լայն զանգվածների համար, բոլոր նրանց համար, ում հետաքրքրում են հայոց մեջ ընդունված շարժույթները, դրանց կատարման եղանակները, արտացոլումը հընչյունական լեզվում, իմաստները, հոմանիշությունները:

Հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում Երևանի երաժշտական կոմերիալի դերասան Վանիկ Մկրտչյանի, ռեժիսոր Առն հալաչանին, Տեր-Գրիգոր քահ. Մարկոսյանին, բանասերներ Անահիտ և Հասմիկ Գևորգյաններին, իր մյուս ծանոթներին ու մտերիմներին՝ շարժութարանի վրա աջակցություն: տարիներին ցույց տված օգնության, խորհուրդների ու պարզաբանումների համար:

Ա

Ը. 1 (շարժ), քայ. ԱԳՈՒՑԱՄ ՄԱՏՆԵՐՈՎ ԻՐԱՐՈՎ ՄՄԼԵԼ, իրար հագցրած մատները սեղմել, մատները ծալել, մատները ոլորել: (Երկու ձեռքի մատները հագցնել՝ միադրուսել միմյանց, ծռել մերթ դեպի մեկ, մերթ մյուս ձեռքի երեսի կողմը՝ միաժամանակ իրար սեղմելով ու թեթեթելով):

1. Տառապել, վշտից տանջվել: «Միշտ էլ գլուղն իր մասնագետ քամբասողն է ունեցել: ...Մասնեն շունչ առավ, ազուցած մատները ճմլեց իրարով:— Ես հարգում եմ այդ մարդուն որովհետև միակն է որին վստահում եմ» (ԱՍԵ):

2. Հանկարծական, բռուն ուրախություն

սպրել: «— Դու ինչ է, ոչինչ քիտե՛ս: ...Ինչ տեսակ կին ես: Անից ամոռ սեղմեց իրար հագցրած մատները: Առաջին պահ ցավն ավելի ուժեղ էր, քան ուրախությունը: Ուրեմն, Գուրգենը գնում է արտասահման» (ԱՍտ):

Ը. 2. կեց., (գին.) ԱԶՂԻՐԻՐ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԶԵՆՔԵՐԸ ԶԳԵԼ, ամբողջ մարմնով ձգվել, դքվել, զգաստ դառնալ (լինել), զգաստ դիրք ընդունել, զգաստ կանգնել, զինվորական կեցվածք ընդունել, կանգնել (լարի պես ձգվել, ձեռքերն ամուր սեղմել կողքերն ի վար), ձգված կանգնել, ձգվել, ձեռքերը ազդրերին սեղմել, ձեռքերը կարերի հետ ուղիղ մերթ ձգվել, ձիգ կանգնել,

ոտքերը միացնել իրար— ձգվել, տեղը ձիգ կանգնել, տեղը ցցվել, տեղում ձգվել: Ած., մակ., Զգաստ: (Կանգնել՝ մարմինն ուղղածից դիրքով, ձեռքերը դեպի ցած ձգած, գլխովը բարձր, ոտքերի կրուցկներն իրար միացրած): Կարգապահությունն ու հարգանք արտահայտող կեցվածք ընդունել: «...Մայր Հարությունյանը հանդիպեց հասակավոր զինվորիս:—Հուսալիտալից ես, հայրենակից— միշտ այդպես, ընկեր մայր, — որպես փորձված, կարգապահությանը վարժ հին զինվոր, ամբողջ մարմնով ձգվելով պատասխանեց սերժանտը: Զգաստ կանգնելուց ձգվել էր նաև նրա սև ու թավ բեղը (ՍԿ): «Ջոկատը կանգնեց: ...— Զգաստ, — հրամայեց Եղիշը: Ջոկատը ձգվեց:— Հավասար» (ՄՄ): «Էլ, տեսնան Անտոնյանը ... Օրվա հրահանգներն էր տալիս միլիցիայի հերթապահներին, ... հերթապահները զգաստ կանգնած էին... Սիրում էր, ստորադրաւները իր առաջ կանգնեմ այդպես ձգված» (ՎՊ): «Մտնեում են երկու զինվոր, զգաստ կեցվածքով պատվո պահակ կանգնում (ԺՀ): «Նրան է մտնեում գնդապետ Սվետլիցկին: Ես կտրուկ կանգնում եմ, ձգվում լարի պես, ձեռքերս ամուր սեղմում կողքերս ի վար» (ՀՀ): «Պորուշիկը վազեց դեպի կառքը, բաժնուհի կարերը ճութացնելով կանգնեց ձգված միջև Անդրաճիկը նստեց ...օթոցին» (ՍԽ): «Ծոտով մթան միջից ծոում է մի միլիցիոներ, ձգվում է Խոյունցի առաջ ու զեկուցում.— Ընկեր պետ...» (ՍԱ): «Զինվորականները արձանացան: ...Թոմասյանը մտնեցավ նախարարներին և սաստիկ ձգված զեկուցեց—Պատիվ ունեմ զեկուցելու, որ նավը կազմ ու պատրաստ է» (ԿԶ): «—Իսկ ձեր անունը, ազգանունն ինչպե՞ս է,— գնդապետն այս անգամ դիմեց Արամի մոտ կանգնած երիտասարդին: Արմենյան Հրաչյա,— ձեռքերը ազդերին սեղմելով՝ պատասխանեց երիտասարդը» (ԲԹ): «—Իբր դրանով ո՞ւմ պիտի սպանեին, ընկեր Իսպիրյան,— ձեռքերը գալիքի կարերի հետ ուղիղ ներքև ձգած՝ հարցնում է նա:— ...Զինվորի թե մի բան գիտես, հետաքրքրվում է տեսուչը» (ԲՀ): «Վահրիճը մտնեցավ հանգիստավոր, կանգնեց աղջկա առաջ, ոտքերը միացրեց իրար, ձգվեց և ճոր միայն ներկայացավ.— Վահրիճ» (ՍԱ): «... Միլտեսուչ Իսպիրյանը լսում է. Ո՛վ է,— հանկարծ նա ձգվում է տեղում,— լսում եմ ընկեր Աբրահամյան: ...Ներս է գալիս Նահապետյանը... տեսնելով Իսպիրյանին հետախուսի առաջ փախտի պես ձգված... Աբրահամյանը նրանց ընդունում է. ... Իսպիրյանը ձգվում է տեղում և քարացած սպասում» (ԲՀ):

Ծ. 8 (շարժ., ծածկ.), բալ., ԱՋՌԸ ՍԵՂ-ՄԵԼ (ՄԵԿԻ), ծուկը սեղմել, ձեռքով ազդեր սեղմել, ձեռքով ծուկը սեղմել, մատների ծայրով ազդեր սեղմել, մատների

թայրով ոտքը սեղմել, մատներով ազդեր սեղմել, մատներով ծուկը սեղմել, մատներով ոտքը սեղմել: (Ծարձանքը կատարվում է երկու տարբերակով՝ սեղմում են հաղորդակցի ա. ազդերը. բ. ծուկը):

1. Մտքում եղածը, հույզերն անկատ հաղորդել ուրիշին: «Բեկյանը մի երկու անգամ սեղմեց նրա ազդերը և ականջին շշջաց.— Դու ճիշտ ես, դու ճիշտ ես» (ԲԹ): «Ռեկտորության մեջ էր Ավագյանը, հենց որ Տիգրանն իր տեղը գրավեց, նա ամուր սեղմեց նրա ծուկը՝ ի նշան հավանության» (ԲԹ):

2. Ծածուկ գգուցանել: «Դիվիզիայի հրամանատարի գլխին ասես ծանր մտքով հարվածեցին, նա ուզեց գոռալ: «Լոկոր, ... Դու ո՞վ ես, որ»: «...Բայց շտաբի ...պետը սեղմեց նրա ազդերը: Նա իսկույն զգաստացավ» (ԲԹ): «Ռուբենի վերջին խոսքերի վրա Արփիկի կատաղությունն եկավ, նա գլուխը վեր բռնեց և ուզում էր պատասխանել, բայց Ասքանազյանը ծուկը սեղմեց և հասկացրեց լռել» (ՊԳ):

Ծ. 4 (շարժ.), բալ., ԱՋՌԻՆ ԶԱՌ-ԿԵԼ, ազդերն խփել, ազդերն շ(ր)խկացնել, ազդերն շրմփացնել, արհ ազդերն զարկել, արհ ազդերն խփել, ձեռքը ոտքին խփել, (շրմփացնել), ձեռքի արհ զարկել (խփել, շրմփացնել) ազդրի կողին, ձեռքն ազդրին խփել (զարկել), ձեռքով ազդրին զարկել (շրմփացնել), ձեռքով ազդրին խփել (հարվածել):

1. Զարմանալ, աչքել: «—Այ մարդ... Վե՞նո՞ւ ձեռքը խփեց ազդրին և շարժեց օդում իբրև զարմանքի նշան՝ «հնչպես են ապրում մարդիկ էնտեղ... այ մարդ... նա նորից ձեռքը խփեց ազդրին և ապա զարմանքով ու հարգանքով շարժեց օդում:— Ոչ թղավոց, ոչ հոճոց» (ՄԱ):

2. Ինքնագոհություն, գոհունակություն արտահայտել: «Հեռախոսի հետ կապ չլուսի,— ասաց անթև սպիտակ շապկավորը,— ավտոյի հետ էլ կապ չլուսի, ինքն իրենով լավպահ է, ինձ նման, Այա ...նրա աչքերը լցվեցին ծիծաղով, և նա խփեց իր ազդրին» (ՀՄ):

3. Եզրահանգվածն զայ, եհ, դե ուրեմն: «Ձեռքը ազդրին խփեց,— դեհ, որոշեցինք, ուրեմն աչքս էլ կանենք»:

4. Խորապես արհուսալ: «—Կյանքս կտալի, մե՞նակ թե մի թուպեով տեսնի նրան... Վե՞նո՞ւ ամբողջ ուժով ձեռքի արհ շրմփացրեց իր ազդրի կողին,— դա նշանակում էր արհուսանք անհնարին համար» (ՍԱ):

5. Վշտանալ, կոծել: «—Մեկը մեռել է, հրեն տանում են թաղեն: ... Հարսը տխուր գլուխն օրորեց և նորից զարկեց ազդրին: «Քույրիկ, ո՞րն է Մե:իք Սաֆրազի տունը: Հարսը ...ձեռքով զարկեց ազդրին:— Մե:իքը մեռել է...» (ՍԱ): «—Քեռակին, ...ինչո՞ւ ես մոռացել մեր սովորությունը... Քեռակինը պի՞նո՞ւ զարկում է փափուկ ազդրին ու քերում

մի ափսե դնում հարսի ոտների տակ: Հարսը ոտքը վրան դնելով ջարդում է ափսեն ու մտնում տուն» (ՍԱ): «—Կկորչի խեղճ մարդը, հեղեղը կքշի-կտանի: Վայ քրիշակ մնաս դու, այսպես էլ անձրև,— տրտնջաց մի պանավ ու շրմփացրեց ազդրին» (ՍԱ):

ԱԶԳՈՒՆ ԽՓԵԼ

ԱԶԳՈՒՆ Ծ(Դ)ԽՎԱՑՆԵԼ
ԱԶԳՈՒՆ ԾՐՄՓԱՑՆԵԼ

տես 2: 4:

Ծ. 5 (քայլ.), գոյ., ԱԶՆՎԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ (ՔԱՅԼՎԱԾՔ, ՔԱՅԼՔ), վեհ, վեհաշուք, վեհապանծ, վեհաքանչ, վեհ քայլեր (քայլվածք, քայլք): Բայ., վեհորեն քայլել: Անշտապ, սահուն ու գեղեցիկ քայլվածք, որն արտահայտում է արժանապատվություն, վեհություն ու վայելչություն, գրվելը բարձր է, կենցվածքը՝ հուպարտ: Հակահոր՝ անփուլք քայլվածք: «Առանձնապես նկատեց սիրուն հասակով ու դեմքով, ևս ձեռնոցներով կին մը, հազիվ քատատուն տարեկան: ...Չկտրված սպիտակ վարսերը առանձին հմաք կուտային: ...Ան կանցներ արձակ՝ ազնվական քայլերով» (Հ): «Փողոցում հանդիպողները վեհաշուք քայլվածքից ենթարդում էին, թե հասարակ մեկը չէ նա: Վեհ քայլվածք ուներ, ալելի ճիշտ՝ վեհաքանչ, ասես թեմում լիներ իր անկրկընելի դերերից մեկում հանդես գալիս: Իր մտտքն էր. վեհորեն քայլեց դեպի թեմ: «Հասարարություն, եղբայրություն և սեր... Կարևորը՝ մեր ...համերաշխության գաղափարը: Այս խոսքերով ...նա վեհապանծ քայլվածքով դուրս եկավ քակից» (ԾՓ): «Աղջիկը ...հանդարտ ու վեհ քայլերով առանց ետ նայելու գնաց: ... Հիրավի, ի՞նչ էր այն, ո՞վ էր: Ինչո՞ւ արդյոք այնքան տարօրեն թվաց ինձ նրա երևույթը. վայելուչ ու շքեղ հասակով, վեհ քայլվածքով կին էր, ամեն ինչ համաչափ» (ՎՓ):

Ծ. 6 (կեց.), բայ, ԱՓՈՒԻՑ ԲԱՐՁՐԱՆԱԼ (ՎԵՐ ԲԱՐՁՐԱՆԱԼ), կանգնել, նստած տեղից բարձրանալ, նստած տեղից ելնել (կանգնել, վեր կենալ), ոտքի ելնել, ոտքի բարձրանալ, ոտքի ելնել, ոտքի կանգնել, վեր ելնել, վեր կենալ, տեղը կանգնել, տեղից բարձրանալ, տեղից ելնել, տեղից կանգնել, տեղից վեր կենալ, տեղում կանգնել, տրնկվել: Մակ. հոտնկայս, ոտնկա, ոտնկայս, ոտնկաց: Գոյ. ոտնկայություն, ոտնկացություն:

1. Իր անձը ներկայացնել՝ ես եմ: «Մտավ լապրան և առաջին հարցն եղավ. «Այտե՛նդ է Ջարյանը»: Ոտքի կանգնեց: Մոտեցավ, ձեռքը դրեց ուսին: ...Ոչինչ չասաց, անցավ պարապմունքին» (ՌԶ): «Հինգերորդ դասարանում նա մեր դաստիարակն էր: Սեպտեմբերի մեկին դասարան մտնելով հարցրեց— Դասկո՞ւմ: Ես ոտքի կանգնեցի:— Նստի՛ր, նկատի կառնեն...» (ՌԳ): «Եվ հանկարծ անսպասելի մի հարց.— Ո՞վ է ձեր միջի ամենատարեցը: Տեղից բարձրացավ

Մինաս Հյուսյանը և ասաց, թե մեզանից ճ— 7 տարով մեծ է: Դասախոսը թետաքրքրվեց, թե քանի՞ տարեկան է» (ՌԶ):

2. Հարգանք, պատկառանք արտահայտել: «—Հիմա ես սիրով ձեզ կծանոթացնեմ մի թանկագին մարդու հետ,— ասաց ...Մալինյանը,— Վահան Տերյանի հետ: ...Ի սրտե ուրախ եմ,— պատասխանեցի ես,— վեր բարձրացա աթոռից և ջերմ սեղմեցի քանաստեղծի ձեռքը» (ՎՏԾԻ): «Ծառերի տակ թիկնած ու նստած մարդիկ անմիջապես բարձրանում էին, երբ մեր խումբն անցնում էր նրանց մոտով: ...Հրավիրում էին Վարպետին մի քաժակ գինի խմելու...— Ընկեր Ավետիք Իսահակյան ջան...» (ՀՀ): «Ջախար Հակոբիչը գնաց ավանտյետ: ...Այսպես, որ նրա ներս մտնելուց ակամա կանգնել էր, ինչպես անում էր դպրոցում՝ աշակերտ ծամանակ, երբ դասարան էր մտնում ուսուցիչը, ... նըստեց» (ՍԽ): «Թումանյան խոսք է վերցնում... «Ընկերներ, ...հոտնկայս հարգե՛ք նրա հիշատակը: Բոլորը կանգնում են հանկարծահար եղած» (ՓԾԻ): «Նա իրոք ձայն լսողից, բարձրացավ ոտքի, ...և ասաց (ԲՀ): «—Հասարատան կենացը,— առաջարկում է տնօրենը,— Հայաստանի կենացը,— հանկարծ ոտքի է ելնում աշակերտությունը: Նրանց ձեռքերին, իհարկե, չկան գինով լիքը գավաթներ... (ՍՍ): «Կոմպոզիտորը ձգվեց և ոտքի ելավ, երբ հրապարակեցին նրան Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում շնորհելու որոշումը, հետո նորից նստեց աթոռին» (ՄՍԱ): «Առաքել պապը ...ոտքի կանգնեց: Մենք նույնպես ոտքի ելանք: Այդպես է կարգը մեր երկրում, եթե ուսուցիչ է ներս մըտնում՝ բոլորը պարտավոր են ոտքի ելնել (Ռ. Հ): «Չարենցն... դահլիճ մտավ՝ ...բոլորը ոտքի կանգնեցին: Ծափերին վերջ չկար» (ՌԶ): «Վերջում խոսքը տրվեց Չարենցին: Ժողովրդը նրան հոտնկայս դիմավորեց» (ՌԶ): «Մոտեցավ Ավետիք Իսահակյանը: Աղջիկը ոտքի կանգնեց: —Ի՞նչ ես կարդում,— հարցրեց նա» (ԴՂ): «Ապա ներս մտավ դասարանի ողջ կազմը: Բոլորը ոտքի կանգնեցին» (ՀԶ): «Ծանշյանը ներս մտավ, ...կանգնեց դասարանի կենտրոնում: Ամենքս վերկացանք ու տեսչի նշանացի հրամանին համաձայն տեղներս նստեցինք» (ԳԳ): Վերջացնելով խոսքը, հայրս քաժակը դատարկեց: ...Վերկացավ Գարեգինը: ...Նա մեղմ ու ազդու ձայնով սկսավ խոսել» (Մ): «—...Առաջարկում եմ խմել հայ ժողովրդի նշանավոր գավաթի կենացը... Բոլորը ոտնկայս խմեցին Ջիվեղտովի կենացը» (ՀՂա): «Մտնում է տիկին Գյուրջյանը: ... Բոլորը ոտնկայս առնում են նրա բարևը» (ՍՍա): «Մարգարյանը Արզումանյանից իրավունք խնդրեց ու կանգնելով տեղը՝ հանգիստ ձայնով ասաց.— Ժողովն ընթանում է օրինական ձևով, համբերե՛ցեք» (ՍՍ): «Պարոն Ղամբաջ

խկնում քաղաքավարությունը տեղիցը կանգնեց, հարգանքով բարևեց... հրավիրեց Չիչակյանցին նստելու» (ՊՊ): «...Աղան» մոտեցավ մեզ: Մենք ուսուցչի պատվերին համաձայն՝ տեղեկիցս կանգնեցինք և խոր գլուխ տվինք» (ՊՊ): «...Հմայակ ջան, բարոյ կտառվարես: Տեղիցս ելա, ներսումս խնդրեցի:— Ծատերին չեմ ճանաչում, ես չեմ կարող» (ՍԳ): «Երբ մարդիկ լի գավաթները դատարկեցին, տեղից բարձրացավ հագրատյանը, կենաց առջարկեց» (ՖՎ): «Գարրիելը հայացքով ձայն խնդրեց, ապա տեղից վեր կացավ.— Իմ բարեկամներ...» (ՖՎ): «Այս միջոցին Սարգիս քոխվան եկավ, և նստածները տեղեկիցը վեր կացան:— Բարի աշողում, տղեք» (ՂԱ): «Ծական Յակնյանը տնկվեց իր բարակ՝ յող-յող հասակով:— Ըստ կարգի մի ձայն, ընկեր քարտուղար: Այստեղ անկուսակցականներ կան:— Տեղդ վեր ընկիր,— նրա փեշը քաշեց հարկեն Միքայելյանը» (ՍՍ):

3. Վճռակամություն արտահայտել: «— Մեր մտածելն էլ էն է, հորեղբայր,— ոտքի կանգնելով ասաց Եղիշը,— որ ես պիտի գնամ ու կամավոր գրվեմ:— Ես,— մատը կոծքին դրեց Եղիշը» (ՄՄ): «—Որմիդդ, դու կուզե՞իր, որ ես հեռանամ երեխաներից: ... կապահովեմ նրանց ապրուստով և կբաժանվեմ:— Երբեք այդպիսի բան չես անի,— ոտքի ելավ կինը:— Մեկ անգամ որբացածին նորից չեմ որբացնի: Ի՞նչ կարելի թողնե՞լ...» (ԱՍ): «Մեյքո, ասա, ի՞նչ գ՛ուզես, քու ազատութիւնը: ...Նստոտ, ոտքի կանգնելով, Հա, իմ ազատութիւնը, ... Ես իմ ազատութիւնս իմ ուզում, իմ կատարյալ ազատութիւնը ...Ազատութիւն կամ մահ... Մեյքո, նույնպես ոտքի է կանգնում, ...Ես քու ազատութիւնը քու կատարյալ ազատութիւնը բերիմ, քի տամ...» (ԳՍ):

4. Բարկանայ, վրդովվել: «Բայց ես խոսքս դեռ չավարտած՝ կարիճնն ելավ նստած տեղից.— Ի՞նչ,— դու ուզում ես, որ ես վերջին ունեցածս գոհ բերեմ քո Քնարիկի՞ն... Երբ կանայք մի քիչ բարկանում են, կորցնում են տրամաբանելու ընդունակությունը (ՍԶ): «—Երեք տարի է՝ Երևանից հեռոջ ես եկել, ե՞րբ ես մի կարգին գրուցել քոջոջ հետ,— վրդովմունքից ոտքի ելավ Ներսեսը, (ԱՍ): «—Պատիվ կը պահանջեմ, պոռաց Ծավարշ ոտքի ելելով, ի՞նչ ըսել կ'ուզեք ձեր այս խաբարով:—Հանդարտեցեք,— ըսավ վահան՝ Ծավարշ բարկութենե՞ն դողափար նստավ իր աթոռին» (ԵԾ): «Դու էլ, իհարկե, հաստատեցիր: Զարո:Բին ընդոտ կանգնեց ոտքի: Ինչպե՞ս կարող էիք մտածել... Մի՞թե ես սուտ պիտի ասեի, այն ինչպե՞ս կարող էի» (ՍՀա): «— ... Մտածեցի, որ եթե տարիներ առաջ, երբ եկա այս տունը, ես զգայի, որ այստեղ ունեմ մի... Բարոյանը վրդովված վեր կացավ:— Դուք հիմա, Վիկտորյա, այն-

քան էլ իրավացի չեք...» (ԾԹ): «—Իսկ ես կարծում եմ, որ կարող եք,— բարկությունից վեր կացա ես և մատս թափ տվեցի նահանգապետի վրա: Կարող եք, քայց չեք ուզում անել: ...Մենք հիմա կերթանք ուղի Թիֆլիս և...» (ՍԶ):

5. Անակնկալի գալ, զարմանալ, ապշել: «Հեռախոսը գնաց: Այսան ...ալարեց, քայց երբ վերցրեց լապիտը, անպասելի կանգնեց:— Ի՞նչ, ...ո՞վ է խոսում: Հիմա, հիմա» (ՍՍ): «Սեղանիս դրեց «Սմասա Մհերը»: ...Ծտապ թերթեցի պոեմը, ...ձեռագրի վրա մակագրեցի. «Պատրաստ է տպագրության. Սիրաս:— Ինչպե՞ս, առանց կարդալո՞ւ,— հո:զված, արայացած բարձրացավ տեղից» (ՀՍ): «—Իսկ դուք ե՞րբ եք տեսել ներսան վերջին անգամ,— հուզված հարցրեց Աշխեն Սարույանը:— Չորս ամիս առաջ,— հանգիստ պատասխանեց հիմնարկի պետը:— Որեմն նա կա՞, հա՞, ապրո՞ւմ է, տեղից բարձրացավ մեքենագրուհին:— Կա, ընկեր Աշխեն, կա...» (ԳԲ): «—Կենտկոմի քաժնի վարիչն է զանգ տալիս, ...քողորհն իրար եք խստնել:... Ես բարձրանում եմ տեղիցս, ձայնս դողում է.— ...Երեխա հո չե՞մ, ընկեր Սարյան, մի՞թե ես ձեր անունից սուտ-սուտ բաներ կասեի, նրանք ուզում են ձեզ թյուրիմացություն մեջ գցել» (ԱԲ): «— Պիտի ըսեմ, որ դուք չափազանց անհոգ, եսասեր ու անբարեբախտ մեկն եք: Ա՛նքան անակնկալ էր, որ ոտքի ելա ականամ:— Նստեցեք,— ըսավ հանգիստ» (ԼԾ):

«Այդ բոլոր նամակները գրված են ձեր աշակերտի ձեռքով:— Ինչպե՞ս թե,— չհասկացավ Մամյանը,— մեր աշակերտը ի՞նչ... և ապշած ոտքի կանգնեց,— չի կարող պատահել:— Հայր Քանքարյանը թելադրել է, որդի՛ գրել» (ՎՊ): Հանկարծ ...քղավեց:— Ուզում եք ի՞նչ թաղել... Զարմանքից երեքով ոտքի ելանք ու հարցական նայում ենք նրան: Հիմնարկը ուզում եք կործանել:— Ի՞նչ է պատահել...» (ԳՄ): «Այսպես հասանք մյուս կայարանը: Հազիվ գնացքը կանգնել էր, մեկ էլ պատափի շնիկը, լեզուն հանած, վազեվազ ընկավ վագոն և եկավ թուրվ պատափի գոգը: Ծամկորդները զարմանքից վեր կացան— Ա՛, եկավ, շունն ե՞կավ» (ՍԶ): «—Ընկեր մախազահ, քեզ հատնի՞ է, որ անասնակները վերջանալու վրա է,— ասաց Ռուբենը:— Ինչպե՞ս թե,— տեղը կանգնելով՝ հարցրեց Հասարայանը» (ՍՍ):

6. Խոսակցությունը, ընդունելությունը ավարտած համարել, վերջացնել: «Երևի ես ավելի զբաղեցրի նրան, քան պետք էր, դրա համար էլ կանգնում է, որ նշանակում է, թե վերջացրի՞ք... Ընկեր Խանջյանը սեղմում է իմ ձեռքն ու ասում.— Գնա այս ընկերոջ հետ» (ՍԱ): «Արամ ոտքի ելավ, ըզգացնելու համար, թե խոսակցությունը ավարտված էր: Թորոս պել ինքն ալ ակամա

նորքի ելավ» (ՏԿ): «— Ուրախ եմ, պարոն, ասաց տ. Սոհրոկլանցը... ամուսինս ձեզ երկար պահեց: ...Մեր այդ խոսակցության ժամանակ Սուհրոկլանցը նույնպես ոտքի կանգնեց. ես զգացի, որ ամենալավ ժամանակն է հրաժեշտ տալու:— Թույլ տվեք ձեզ ցտեսություն ասել,— (ԳԼ): «...Հավակներդ վեցքոու, իսկ նրանց մորը արձակիր: —...Ոչ, սրբազան, ես չեմ կարող մորս պահանջը կատարել: Այդ ասելով նա ոտքի կանգնեց ցույց տալու համար, որ այնև ավելորդ է համարում այդ մասին խոսելը» (Ծ): «—Դե

դուք գիտեք,— ասաց տանտերը և վեր կացավ: Նրան հետևեց և Պատրիկյանը: Ասելու այն է, որ... նա խոսքը չվերջացրեց,....— ինչնիցն, ցտեսություն» (Ն): «Բայց մինիստրի տեղակալը ժամանակ չտվեց:— Գիտեմ, գիտեմ... Նա վեր կացավ, ցույց տալով, որ խոսակցությունն արդեն ավարտված է: Կանգնեցին նաև ամուսինները» (ՄԽ): «—Վերջացավ, կարող եք գնալ ձեր բանին,— տեղում կանգնելով հայտարարեց Հանրաթյանը,— իսկ դու Մաշուրյան, պատրաստվիր բրիգադիրությունդ հանձնելու» (ՄԽ):

Ե. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

(Գիտական նստաշրջան՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակին)

Համաշխարհային պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ունեցել է այնպիսի իրադարձություններ ու պահեր, որոնք ճակատագրական ու քախտորոշ են եղել ողջ մարդկության համար: Այդպիսին եղավ նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այդ անեղ աշխարհամարտը, որը 1939 թ. սեպտեմբերի 1-ին Եվրոպայում սանձազերծեց ֆաշիստական Գերմանիան, 1941 թ. հունիսի 22-ից Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների համար վերածվեց Հայրենական մեծ պատերազմի: Գերմանիան՝ խախտելով ԽՍՀՄ-ի հետ 1939 թ. օգոստոսի 23-ին տասը տարի ժամկետով կնքված չհարձակվելու պայմանագիրը, ոչխաղործորեն արշավանք կազմակերպեց խորհրդային երկրի վրա՝ նպատակ ունենալով տիրանալու նրա տարածքներին ու հարստություններին, ստրկացնելու նրա ժողովուրդներին և ստեղծելու գերմանական ռասիստական մի մեծ կապրություն արևմտ-արևելքի մինչև Հեռավոր Արևելք և հյուսիսից մինչև ծայր հարավ:

Դրանով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի նոր փուլը: Այն ավելի ընդլայնվեց՝ ներառելով նորանոր երկրներ ու ժողովուրդներ: Փաստորեն ամբողջ աշխարհը տրոհվեց երկու հակամարտ կողմերի, որոնք լինդգրկեցին մոլորակի բնակչության շուրջ 80 տոկոսը, մարտական գործողությունների մեջ մտան 80-ից ավելի պետություններ:

1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը Խորհրդային Միության ժողովուրդների պատմության ամենածանր ու դժվարին ժամանակաշրջանը հանդիսանալով հանդեռ, միաժամանակ նրանց կենսագրության ամենաերբուրակաճ տարիները եղան: Աշխարհի ոչ մի ժողովուրդը երբևէ չի կրել այդպիսի ծանրագույն փորձություններ, ինչպիսիք բաժին ընկան խորհրդային ժողովուրդներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմը, չընդածաճ ավարտվեց ազատաւեր ժողովուրդների մեծ հաղթանակով, իր հոգևոր ու նյութական ավերածությունների կնիքը դրեց ողջ աշխարհի վրա: Այդ պատերազմում զոհվեց 80 միլիոնից ավելի մարդ, որից միայն 22 միլիոնը՝ խորհրդային Միության քաղաքացիներ էին, ավերվեցին հարյուրավոր քաղաքներ, հազարավոր գյուղեր ու ավաններ, նյութական վնասը կազմեց 2569 միլիարդ ռուբլի:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած պատմական մեծ հաղթանակը իր նշանակությունը ու հետևանքներով սերունդների ճակատագիրը որոշող մեր դարի խոշորագույն փորձությունը եղավ: Ֆաշիզմի դեմ տարած այդ քախտորոշ հաղթանակը ձեռք բերվեց հիմնականում Խորհրդային Միության ժողովուրդների բյուրավոր զավակների արյան գնով: Այդ հաղթանակով ամբողջ աշխարհը ազատվեց ստրկացուցից, ռասիզմի ճիւղաններից, համաշխարհային քաղաքակրթությունն ու մշակույթը փրկվեցին կործանումից:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակն ավարտից հետո, Խորհրդային Միությունը, հավատարիմ իր դաշնակցային երդմանը, 1945 թ. մայիսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը մասնակցեց Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին փուլին՝ Հեռավոր Արևելքում վճռական նպաստ բերելով միլիտարիստական Ճապոնիայի պարտությանը: Այդպիսով, ավարտվեց քաններորդ դարի երկրորդ մեծ աշխարհամարտը, որով և փրկվեց հիտլերյան խմբավորումը, վերջ դրվեց ֆաշիզմին:

Պատերազմի ատաշին իսկ օրերից հալ ժողովրդի քաջարի զավակները անարգ թըշնառու դեմ մարտնչել են թե՛ ազգային գոյամիավորումներում և թե՛ ինտերնացիոնալ գործառնաւերում, թե՛ դաշնակիցների բանակնե-